ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 08.06.2015թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 17/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով Ա/Ձ Նարեկ Մայիլյանի 18.05.2015թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-17/15 բողոք) և կից փաստաթղթերը, ինչպես նաև ուսումնասիրելով նշված բողոքը, ի լրումն 18.05.2015թ. բողոքին ներկայացված Ա/Ձ-ի 03.06.2015թ. գրությունը, Սարավանի գյուղապետարանի 20.05.2015թ. գրությունը, «ՍԳՊՇՀԱՊՁԲ-15/21-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), «ՍԳՊՇՀԱՊՁԲ-15/21-1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.05.2015թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությունը և 13.05.2015թ. թիվ 3 որոշմամբ՝ հրապարակված «ՍԳՊՇՀԱՊՁԲ-15/21-1» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և ԳԲԽ-17/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 05.06.2015թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

<u>1. Ա/Ձ Նարեկ Մայիլյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>

Ա/Ձ Նարեկ Մայիլյանը (այսուհետ նաև՝ Ա/Ձ) 18.05.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ա/Ձ-ն ներկայացնում է բողոք՝ Սարավանի գյուղապետարանի

կողմից Սարավան համայնքի կարիքների համար գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՍԳՊՇՀԱՊՁԲ-15/21-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. մայիսի 13-ի թիվ 3 որոշմամբ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման դեմ:

Ա/Ձ-ն նշել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները: Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Նույն օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Ա/Ձ-ն հայտնել է, որ Սարավանի գյուղապետարանի կողմից www.gnumner.am պաշտոնական կայքում պայմանագիր կնքելու մասին որոշումը հրապարակվել է 13.05.2015թ., իսկ անգործության ժամկետը ավարտվում է 19.05.2015թ. ժամը 15:00 ներառյալ:

Ա/Ձ-ն նաև հայտնել է, որ Սարավանի գյուղապետարանի կողմից Սարավան համայնքի կարիքների համար գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարվել է թիվ «ՍԳՊՇՀԱՊՁԲ-15/21-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Ընթացակարգին մասնակցել են երկու կազմակերպություն՝ «Նարեկ Մայիլյան» Ա/Ձ-ն ու «ԱՍ Գրուպ» ՍՊԸ-ն:

«ՍԳՊՇՀԱՊՁԲ-15/21-1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. մայիսի 13-ի թիվ 3 որոշմամբ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման համաձայն՝ հայտ ներկայացրած մասնակիցների ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Նույն որոշման համաձայն՝ «ԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի գնային առաջարկը բոլոր հինգ չափաբաժինների մասով եղել է նվազագույնը, որի հիման վրա վերջինս ճանաչվել է հաղթող:

«ՍԳՊՇՀԱՊՁԲ-15/21-1» ծածկագրով ընթացակարգի հրավերի թիվ 4-րդ հավելվածի /գնի առաջարկի օրինակելի ձևի/ համաձայն՝ գնի առաջարկը անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ ձևով.

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6=3+4+5
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N 1>>				
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N 2>>				
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N 3>>				
4	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N 4>>				
5	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N 5>>				

Ա/Ձ-ն նշել է, որ «ԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի ուսումնասիրությունից երևում է, որ գնային առաջարկի «շահույթ» մասում վերջինս նշել է «5%», սակայն պետք է նշեր ընկերության շահույթի չափը «ՀՀ դրամով», որը նախատեսված է «ՍԳՊՇՀԱՊՁԲ-15/21-1» ծածկագրով ընթացակարգի հրավերի թիվ 4-րդ հավելվածով:

Ա/Ձ-ն հայտնել է, որ «ԱՍ Գրուպ» ՍՊԸ-ն հենց իր կողմից 05.05.2015թ. ներկայացված գնային առաջարկի մեջ նույնպես նշել է «ՀՀ դրամ» բառը՝ այսինքն գնային առաջարկը պետք է ներկայացվեր ՀՀ դրամով, իսկ գնային առաջարկում նշված «5%»-ը ակնհայտ դրամի չափման միավոր լինել չի կարող:

Բացի այդ, և «ՍԳՊՇՀԱՊՁԲ-15/21-1» ծածկագրով ընթացակարգի հրավերի թիվ 4-րդ հավելվածով նախատեսված օրինակելի ձևի համաձայն, և «ԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացված գնային առաջարկի մեջ նշվել է, որ /6=3+4+5/՝ այսինքն առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/ = ինքնարժեք + շահույթ + ԱԱՀ, սակայն «ԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը ներկայացվել է խախտումով՝ սխալ, քանի որ ակնհայտ է, որ օրինակ՝ 1-ին չափաբաժնի՝ խոտհավաք կոմբայնի համար ընկերությունը առաջարկել է 7.809.523 ՀՀ դրամ + 5% = 8.200.000 ութ միլիոն երկու հարյուր հազար ՀՀ դրամ: Այս պարագայում ակնհայտ երևում է «ԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկում թույլ տրված սխալը, քանի որ 7.809.523 ՀՀ դրամ

+ 5% չի կարող հավասար լինել 8.200.000՝ ութ միլիոն երկու հարյուր հազար ՀՀ դրամին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ա/Ձ-ն նշել է նաև, որ «ՍԳՊՇՀԱՊՁԲ-15/21-1» ծածկագրով ընթացակարգի հրավերի թիվ 4-րդ հավելվածի /գնի առաջարկի օրինակելի ձևի/ համաձայն՝ գնի առաջարկի 4-րդ սյունյակում անհրաժեշտ է լրացնել «ՇԱՀՈՒՅԹԸ», սակայն «ԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնի առաջարկում սխալ է լրացվել համապատասխան տողը, իսկ Սարավանի գյուղապետարանը, «ԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը գնահատելով հրավերի պահանջներին համապատասխանող, կոպտորեն խախտել է ինչպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, այնպես էլ «ՍԳՊՇՀԱՊՁԲ-15/21-1» ծածկագրով ընթացակարգի հրավերի թիվ 4-րդ հավելվածով սահմանված պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդը իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝ որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ գնումների ընթացակարգը կամ պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ, ինչպես նաև դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ:

Նույն օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի՝ Խորհուրդը կայացնում է բողոքը ներկայացրած անձի պահանջած ժամանակավոր միջոցը կիրառելու մասին որոշում, եթե նման միջոցը պատշաճ և անհրաժեշտ է ակնկալվող վնասը մինչև բողոքի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը կանխելու համար:

Ա/Ձ-ն խնդրել է որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառել ժամանակավոր միջոց, կասեցնել Սարավանի գյուղապետարանի և «ԱՍ գրուպ» ՍՊԸ-ի միջև պայմանագրի կնքման գործընթացը՝ մինչև Գնումների բողոքարկման խորհրդի կողմից բողոքի վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելը և դադարեցնել

Սարավանի գյուղապետարանի կողմից Սարավան համայնքի կարիքների համար գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՍԳՊՇՀԱՊՁԲ-15/21-1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. մայիսի 13-ի թիվ 3 որոշմամբ՝ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Ի լրումն 18.05.2015թ. ներկայացված բողոքի՝ Ա/Ձ-ն 03.06.2015թ. գրությամբ խնդրել է նաև չեղյալ համարել «ՍԳՊՇՀԱՊՁԲ-15/21-1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. մայիսի 12-ին ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1.4 կետով՝ «ԱՍ Գրուպ» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը և հաղթող ճանաչել Ա/Ձ Նարեկ Մայիլյանին:

<u>2. Սարավանի գյուղապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

Ա/Ձ Նարեկ Մայիլյանի 18.05.2015թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ Սարավանի գյուղապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 20.05.2015թ. գրությամբ հայտնել է, որ «ԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում գյուղատնտեսական տեխնիկայի ինքնարժեքը ներկայացված է եղել թվերով, իսկ շահույթի սյունակում շահույթը ներկայացվել է տոկոսով՝ տվյալ դեպքում «5%»: Յուրաքանչյուր չափաբաժնի համար առաջարկված ընդհանուր գինը ներկայացվել է ինքնարժեք + «5%» շահույթ արտահայտությամբ: Հանձնաժողովը հաշվի առնելով այն հանգամանքը, որ շահույթի վանդակում գրված «5%» հաշվարկված շահույթը մասնակիցը հաշվարկել և ներառել է ընդհանուր գնային առաջարկի մեջ, առաջնորդվելով մասնակցի ցածր գնային առաջարկով, նրան ճանաչել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Սարավանի գյուղապետարանը հայտնել է, որ բողոքարկող կողմի տրամաբանությունը հիմնվել է շահույթի սյունակում գրված «5%» արտահայտության վրա, որը Պատվիրատուն չի բացառում դիտել որպես թերություն, սակայն բողոքում ոչ մի խոսք չի նշվում այն մասին, որ մյուս մասնակցի ընդհանուր գնային առաջարկը հաշվարկվել է նշված «5%» շահույթը ներառված:

Պատվիրատուն գտնում է, որ կարելի է «ԱՍ Գրուպ» ՍՊԸ-ին հնարավորություն տալ շտկելու այդ թերությունը, քանի որ այն չի հանգեցնում գնային առաջարկի փոփոխության:

3. ԳԲԽ-17/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 05.06.2015թ. եզրակացությունը և առաջարկել է Ա/Ձ Նարեկ Մայիլյանի 18.05.2015թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի՝ դադարեցնել Սարավանի գյուղապետարանի կողմից Սարավան համայնքի կարիքների համար գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՍԳՊՇՀԱՊՁԲ-15/21-1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. մայիսի 13-ի թիվ 3 որոշմամբ՝ պայմանագիր կնքելու մասին և 2015թ. մայիսի 12-ի թիվ 2 արձանագրության 1.4 կետով՝ «ԱՍ Գրուպ» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումները:

4. ԳԲԽ-17/15 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-17/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Սարավանի գյուղապետարանի կողմից Սարավան համայնքի կարիքների համար գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարվել է թիվ «ՍԳՊՇՀԱՊՁԲ-15/21-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին հայտ են ներկայացրել «Նարեկ Մայիլյան» Ա/Ձ-ն ու «ԱՍ Գրուպ» ՍՊԸ-ն:

2. «ՍԳՊՇՀԱՊՁԲ-15/21-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) թիվ 4-րդ հավելվածի /գնի առաջարկի օրինակելի ձևի/ համաձայն՝ գնի առաջարկը անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ ձևով.

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6=3+4+5

1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N 1>>				
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N 2>>				
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N 3>>				
4	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N 4>>				
5	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N 5>>				

3. Հրավերի գնային առաջարկի օրինակելի ձևի համաձայն՝ գնային առաջարկը անհրաժեշտ է ներկայացնել ***ՀՀ դրամով***:

4. «ԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում բոլոր 5 չափաբաժիններով «շահույթ» տողում լրացվել է «5%»՝ որպես ներկայացված ապրանքների շահույթ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.05.2015թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի 1.4 ենթակետի համաձայն՝ գնային առաջարկների գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՍ Գրուպ» ՍՊԸ-ին, 2-րդ տեղ՝ Նարեկ Մայիլյան Ա/Ձ-ին:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.05.2015թ. թիվ 3 որոշմամբ՝ հրապարակվել է «ՍԳՊՇՀԱՊՁԲ-15/21-1» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 35-րդ

կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ:

Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, ***շահույթ*** և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, *բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ* ***գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան***, ապա հանձնաժողովը, մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշյալ պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հայտնաբերելով, որ «ԱՍ Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրած գնային առաջարկով խախտել է Հրավերով պահանջվող թիվ 4-րդ հավելվածի՝ գնային առաջարկի օրինակելի ձևով սահմանված «շահույթ» տողի լրացման կարգը, այսինքն այն ներկայացրել է ոչ թե օրինակելի ձևով պահանջվող *ՀՀ դրամով*, այլ տոկոսով, խախտել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, քանի որ այս տեսանկյունից «ԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը չի համապատասխանել Հրավերով նախատեսված պայմաններին և ենթակա էր մերժման:

Բացի այդ, հենց Պատվիրատուն իր 20.05.2015թ. գրությամբ փաստացի համաձայնվել է Ա/Ձ-ի բողոքով նշված փաստարկի հետ և հայտնել, որ «ԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից շահույթի սյունակում գրված «5%»-ը համաձայն է դիտել որպես գնային առաջարկում առկա թերություն՝ միաժամանակ խնդրելով «ԱՍ Գրուպ» ՍՊԸ-ին հնարավորություն տալ շտկելու այդ թերությունը, ինչն էլ իր հերթին հակասում է Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջներին:

Այսպիսով, գտնում ենք, որ «ԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանել Հրավերով նախատեսված պայմաններին, իսկ Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բավարար են գնահատվում միայն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Ա/Ձ Նարեկ Մայիլյանի 18.05.2015թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի՝ դադարեցնել Սարավանի գյուղապետարանի կողմից Սարավան համայնքի կարիքների համար գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՍԳՊՇՀԱՊՁԲ-15/21-1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. մայիսի 13-ի թիվ 3 որոշմաբ՝ պայմանագիր կնքելու մասին և 2015թ. մայիսի 12-ի թիվ 2 արձանագրության 1.4 կետով՝ «ԱՍ Գրուպ» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումները:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Ազգանուշ Ֆրանգյան**

Անդամներ՝ **Լեոնիկ Խաչատրյան**

Արթուր Բաղդասարյան